ՀԱՅԿ

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԹԵՐԹ

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ, ԳԻՏՈՒԹԵԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Ա.

ԳԻՐՔԸ ՈՐ ՁԵՌՆ ԱՍՏԱ՛Ծ ԻՐ ԿԱՄՔԸ ՉԻ ԱՍԻ, ՔԵ ՀԱՅՈՑ ՀԱՐՍՏԱՀԱՐՈՒԹԻՒՆԸ ՀԱՅՈՑ ՄԷՋ ԱՐԴԻ ՉԻ ՀԱՍԵԼ ՄԻՆՉԵՒ ՍՈՒՐԲ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ ՀՈՍԱՆՔԸ ՈՒ ՄԱՍՆԱՒՈՐ ՄԱՐԴԻԿ ՉԵՆ ԳՏՆՈՒԻ ՈՐ ՉԻՄԱՑՆԷ ՆՈՅՆ ԻՍԿ ՈՒՂԻՂ ՃԱՆԱՊԱՐՀԸ ՈՒ ՉԻ ԿՐՆԱՑԷ ՆՈՅՆ ԻՍԿ ՈՒՂԻՂ ՄԻՏՔԸ ՄԻՇՏ ՊԱՀԵԼ ՈՒ ՊԱՀՊԱՆԵԼ ՀԱՅՈՑ ՄԷՋ ՍՈՒՐԲ ՀԱՒԱՏՔԸ ՈՒ ՍՐԲՈՒԹԻՒՆԸ ՔՐԻՍՏՈՍԵԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀԱՄԱՐ։

Ի ՄԱՍԱՆ ԱՅՍՈՑ ՀԱՐՑԵՐՈՒՆ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐՈՒՆ ՄԵՐ ՀԱՅԿ ԱՄՍԱԹԵՐԹԸ ՈՒՆԻ ՀՐԱՏԱՊ ՈՐ ՄԻՆՉԵՒ ՀԻՄԱ ՄԵՐ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ ՄԷՋ ՊԻՏԻ ՍԿԻԶԲՆԱՒՈՐՈՒԹԵԱՄԲ ՍԿՍԻ ՀՐԱՏԱՐԱԿԵԼ ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՈՒ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ։ ՀԱՅԿ ՄԻԱՅՆ ՄԻՏՔ ՄԸ ՈՒՆԻ ՈՐ ՀԱՅ ՄԱՐԴՈՒ ՄՏՔԵՐՈՒՆ ՄԷՋ ՄՇԱԿԵ ԱՒԵԼԻ ԲԱՐՁՐ ԵՒ ՍՐԲԱԳՈՅՆ ԶԳԱՑՄՈՒՆՔ ՄԸ ՍԵՐՄԱՆԵԼ ՈՒ ՄԱՐԴԿԱՅՆԱՑՆԵԼ ՆՈՅՆԻՆ ՄԷՋ։ ՀԱՅԿԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ ՄԵԾ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՄԲ ԿԸ ՀԵՏԵՒԻ ՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ ՄԵՐ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՑԵԱԼ ՈՒՂԻՆ։

ՀԱՅԿԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԿԱՏԱՐՈՒԻ ՄԱՆԱՒԱՆԴ ՈՒ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ՀԱՄԱՐ ՈՒ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ՄԱՍԻՆ ՈՐՈՇ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՅ ՄԱՐԴՈՒ ՀԱՄԱՐ։

ՀԱՅԿԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ ՄԵԾ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՄԲ ԿԸ ՀԵՏԵՒԻ ՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ ՄԵՐ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՑԵԱԼ ՈՒՂԻՆ։

ՀԱՅԿ ՄԻԱՅՆ ՄԻՏՔ ՄԸ ՈՒՆԻ ՈՐ ՀԱՅ ՄԱՐԴՈՒ ՄՏՔԵՐՈՒՆ ՄԷՋ ՄՇԱԿԵ ԱՒԵԼԻ ԲԱՐՁՐ ԵՒ ՍՐԲԱԳՈՅՆ ԶԳԱՑՄՈՒՆՔ ՄԸ ՍԵՐՄԱՆԵԼ ՈՒ ՄԱՐԴԿԱՅՆԱՑՆԵԼ ՆՈՅՆԻՆ ՄԷՋ։

ՀԱՅԿԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԿԱՏԱՐՈՒԻ ՄԱՆԱՒԱՆԴ ՈՒ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ՀԱՄԱՐ ՈՒ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ՄԱՍԻՆ ՈՐՈՇ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՅ ՄԱՐԴՈՒ ՀԱՄԱՐ

Պէտք է խոստովանել, որ տաս ու հոգ տարուայ ընթացքում պատահաբար կամ դիտմամբ, ի փառս Աստուածաշնչի, ինչպէս նաև ի ամօթ մեր հայրենի ազգային կեանքի, մենք ունեցանք մի շարք ներկայացուցիչներ մեր հոգեւորականութեան, որոնք ոչ միայն չէին ամաչում իրենց հոգեւոր հագուստի մէջ ներկայանալ հասարակութեան առաջ, այլ ընդհակառակն, ամենայն ուրախութեամբ ու հպարտութեամբ կրում էին այդ հագուստը, որովհետեւ նրանց համար ամենամեծ պատիւը եղել է հոգեւորական կոչուելը։ Ինչ որ լինի, մենք ունեցանք այդ տեսակ հոգեւորականներ

և իւրաքանչիւր ցեղին յատուկ առանձին ձգտումները։ Այնտեղ Եւրոպայի պէս չեն վարւում, ուր առանձին անձերի քաղաքական համակրանքներն ստուերանում են ընդհանուր շահերի առաջ։ Թիւրքիայում ապրող զանազան ազգութիւնները հաւասարութիւն են պահանջում, բայց, սիրով ասիճաններ ու պատիւներ ընդունելով, հրաժարւում են որեէ ծառայութիւն կրել իրենց վրայ։ Քինաւորական ծառայութիւնը, որ ամենից ծանրն է, կատարում են բացառապէս մահմեդականները։

Սուլթանը յաճախ ցանկութիւն է յայտնել արմատական բարեկարգութիւնները մացնելու կայսրութեան կառավարութեան մէջ. նա աւելացրեց, որ եթէ գործն այժմ դանդաղել է, թէև բոլորովին չի կանգ առել, դրա պատճառը նոյն իսկ հայերի յարուցած վերջին դժուարութիւններն են։

Կ. Պոլսի հայ երեւելիները սուլթանին մի ուղերձ մատուցին, որի մէջ ասում են, թէ կատարեալապէս գիտակից լինելով, որ իրենց գործը քիչ աջակցութեան է հանդիպում Եւրոպայում, իրենք ջերմագին ցանկանում են յայտարարել, որ իրենց յոյսը դնում են միմիայն սուլթանի մեծահոգութեան վրայ։

Վերջ ի վերջոյ, «Journal des Débats»-ի թղթակիցը սուլթանի խօսքերի մէջ գրաւական է տեսնում, որ կարգն ու խաղաղութիւնը կը վերականգնի։

Երանի՛ հաւատացելոց...

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԾՈՎԱՑԻՆ ՈՅԺԵՐԸ

«Պետ. Վեդ.» լրագիրը օտարերկրեայ լրագրներից առնելով համեմատում է բրիտանական այժմեան նաւատորմղի ծովային այժերը միւս պետութիւնների նաւատորմիղների հետ։ Այդ բանում ա մենամեծ չհաագրգռութիւնը ներկայացնում է Ռուսիայի և Ֆրանսիայի նաւատորմիղների հետ եղած համեմատութիւնը։

Մեծ Բրիտանիան ունի առաջին կարգի 21 զրահակիր, որը նրա պարզ առաջնութիւնն է ցոյց տալիս Ֆրանսիայի և Ռուսիայի միացեալ նաւատորմիղների դէմ, որոնցից առաջինը, այսինքն Ֆրանսիան, ունի տասը, իսկ երկրորդը՝ Ռուսիան—միայն հինգ նման նաւ։ Ընդմին աւելորդ չէ նկատել, որ այդ զրահակիրների մէջ անգլիացիներն ունին այնպիսի հսկաներ, որպիսիք են «Royal Sovereign», «Majestic» և «Magnificent» զրահակիրները, որոնց զուգահեռագծի վրայ կարելի է կանգնեցնել միայն ֆրանսիական մի հատիկ նաւ—«Brennus»-ը։ Բայց, միւս կողմից, Ռուսիան և Ֆրանսիան ներկայումս չինում են 14 զրահակիր անգլիական 8 զրահակրի դէմ, և այդ բանը մօտիկ ապագայում կը հաւասարեցնի այդ հակառակորդների ոյժերն այդ տեսակէտից։ Անգլիական նաւատորմղի մէջ երկրորդ կարգի զրահակիրների թիւը հաշւում են ընդամենը 12 հատ միայն և այդ կարգի նոր նաւեր այլեւս չեն չինւում. իսկ ֆրանսիացիներն ու ռուսները նոյն կարգի նաւերից ունին 16 հատ և, բացի դրանից, Ռուսիայում դարձեալ երկու նման նաւ է չինւում։

Այն ինչ երրորդ կարգի զրահակիրը նաւ Անգլիան ունի 11, իսկ երկու դաշնակից պետութիւնները—2 հատ։ Անգլիացիները յածանաւ (կրէյսեր) աւելի շատ ունին, քան եւրոպական բոլոր պետութիւնները միասին առած, այն է—78, ֆրանսիական և ռուսական 35-ի դէմ։ Ինչ վերաբերում է ականանաւերին (մինոնոս), Բրիտանիայի նաւատորմղի մէջ այդպիսի նաւ կայ ընդամենը 94, մինչդեռ ֆրանսիացիներն ունին 100, իսկ ռուսներնը 63 հատ։ Այս տեսակէտից ամենից զօրեղ է Գերմանիան, որ ունի այդ տեսակի 128 նաւ։ Վերջապէս նոր տեսակի հակա-ականանաւ (կոնտրմինոնոս) ունի միմիայն Անգլիան (28 հատ)։

Անգլիացիների կարծիքով. իրենք ներկայումս անհամեմատ աւելի զօրաւոր ոյժ են ներկայացնում իրենց թէ ամենաուժեղ և թէ ամենանոր տեսակի նաւերով։ Անգլիական յատուկ-ջինուորական լրագիրը, դառնալով մասնաւոր համեմատութիւնների, ասում է. «Մեր նաւատորմղի հետ համեմատած, Ֆրանսիայի նաւատորմիղը, որ ամենաուժեղն է ծովային պետութիւնների մէջ Մեծ Բրիտանիայից յետոյ, ունի մի առաւելութիւն և մի պակասութիւն։ Առաւելութիւնը կայանում է նրա «inscription maritime» սիստեմի մէջ, որի շնորհիւ Ֆրանսիան հնարաւորութիւն ունի դիւրութեամբ լրացնելու իւր նաւերի ջինուորների պակասը. իսկ պակասութիւնը ծագում է նրա կառավարչական անյարատեւութիւնից. 1890 թուից Փրանսիայում փոխուել է 31 կաբինետ և նոյնքան էլ ծովային մինիստր. մնում է զարմանալ միայն, թէ ինչպէս Ֆրանսիան այդպիսի մի սիստեմի մէջ դեռ ևս նաւատորմիղ ունի։ Նրա ծովային բիւջէն, ինչպէս և բոլոր միւս պետութիւնները, բացի Ռուսիայից և Անգլիայից, այս տարի քչացրած է նախորդ տարիների բիւջէներից. սակայն այնուամենայնիւ այդ տեսակէտից նա 8 միլիոն աւելի է ծախսում քան երեք դաշնակից պետութիւնները (Գերմանիան, Աւստրիան և Իտալիան) միասին առած։ Իտալական նաւատորմիղը Միջերկրականի վրայ միւսներից զօրեղ է, ինչպէս իւր նաւերի թուով, այնպէս և պատերազմական նաւահանգիստների ամրութիւններով։ Սակայն յիշեալ առաւելութիւնները փոքր ինչ ստուերանում են չնորհիւ Մալթայի և Կորսիկայի։ Իտալիայի հետ միացած ժամանակ մենք անպատելի կըլինէինք Միջերկրական ծովի վրայ, մանաւանդ, որ մենք այնտեղ բաւական պահեստելի ոյժեր ունինք, այնպէս որ այդ ոյժերը ստոր չեն դաշնակիցների ոյժերից։ Բայց ղրանից, ընդհանուր առմամբ, մեր նաւերի արագընթացութիւնն երկու անգամ աւելի է, քան Ֆրանսիայի և Ռուսիայի նաւերինն այդ ծովում։ Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգների ծովային ոյժերը շատ էլ մեծ չեն, բայց մեզ չի կարող չվախեցնել այդ երկրի հարստութիւնը։ Ինչ վերաբերում է Նայբագոյն Արեւելքի ջրերին, դէպի ուր դարձած է ամբողջ քաղաքակիրթ աշխարհի հայեացքը և որտեղ ներկայումս համախմբուել են նշանաւոր չափով ոյժեր, այդտեղ անգլիացիները պէտք է բաւական ուժեղ զգան իրենց. իւր նաւերի թուով և պատերազմական յատկութիւններով Անգլիան այդտեղ թոյլ չէ Ռուսիայից և Ֆրանսիայից։ Դրութիւնը կըփոխուէր, եթէ յիշեալ պետութիւնների նաւատորմիղների հետ միասնար ամերիկացիների նաւատորմիղը, մանաւանդ ճապոնացիներինը, որոնք չուտով կունենան «Majestic» սիստեմի դարձեալ 4 զրահակիր, առաջին կարգի 4, երրորդ կարգի 3 և երկրորդ կարգի 2 յածանաւ և 11 հատ հակա-ականանաւ։ Մեր նաւատորմղի թոյլ կողմը,—շարունակում է անգլիական լրագիրը,—այն է, որ մեր նաւերի մէջ գժուար է զինուորների թիւը լրացնել պատերազմի դէպքում... Այս գործում բարեփոխութիւն է հարկաւոր, և որքան չուտ լինի այդ բարեփոխումը, այնքան աւելի լաւ մեզ համար։ Սակայն, մի բան, որ ամենից աւելի ցաւալի է այս բոլորի մէջ, այդ այն է, որ անգլիական ծովագնացները կարծես թէ այլասերւում են։ Այսպէս, անգլիական նաւերի վրայ ներկայումս գտնուող 36,000 ծովագնացներից հազիւ թէ 34 հազարը բուն անգլիացիներ լինին։ Կառավարութիւնը պէտք է առանձին լուրջ ուշադրութիւն դարձնէր այս երկու թուերի սպառնական բնաւորութեան վրայ։

Անգլիական զինուորական նոյն լրագրի մէջ համեմատական թուերը են առաջ բերուած այն մասին, թէ իւրաքանչիւր բնակչի վրայ որքան ծախք է ընկնում զինուորական-ծովային գործում։

Մեծ Բրիտանիայում...	10	ֆիւ.	7 պէնս
Հոլլանդիայում	5	»	7 »
Ֆրանսիայում	5	»	5 »
Դանիայում	3	»	11 »
Իտալիայում	2	»	6 »
Հիւս. Ամերիկ.	1	»	9 »
Գերմանիայում	1	»	8 »
Սպանիայում.	1	»	1 »
Ռուսիայում.	1	»	— »

Հոկտեմբերի 1-ից «Նոր-Դար»-ին ընժանորդ են գրւում և վճարում 3 ր. 50 կ.։

ՔՐՈՆԻԿՈՆ

Ս. ԷՋՄԻԱԾՆԻՆ. — Սեպտեմբերի 28-ին, ս. Գէորգայ զօրավարի տօնի օրը, հանդիսաւոր պատարագից յետոյ ս. Գայիանէի վանքում, հոգեհանգիստ կատարուեց երջանկայիշատակ Գէորգ կաթողիկոսի համար։ Սովորութիւն էր, որ հոգեհանգիստը միշտ կատարւում էր գերեզմանի վրայ, բայց այս տարի այդ ևս չեղաւ։ Ս. պատարագից յետոյ ճեմարանի բակում հանդէս կար, ուր ժողովրդի և միաբանութեան ներկայութեամբ պ. Կոստանեանը ճեմարանի 189⁵/₆ ուսումնական տարւայ հաշիւը ներկայացրեց, յիշեց քանի է աշակերտների թիւը, որ տեղից քանի հոգի են, տարւայ ընթացքում քանիսը կամաւոր են արձակուել, ինչ ուսուցիչներ են դուրս գնացել և որոնք՝ ընդունուել։ Քանի մանկավարժական և ուսումնական ժողովներ են եղել՝ աշակերտների բարոյականութեան, մտաւոր, դաստիարակական, ճեմարանի ներքին կանոնների խմբագրութեան համար։ Վերջը մի քանի խօսքով բացատրեց ճեմարանի նպատակը. յիշեց ուսուցիչների չարաթական դասերի թիւը, դասաւանդողների, առարկաների թիւը բոլոր դասարաններում։ Բայց մենք չկմացանք թէ ինչ ուսուցիչ ինչ առարկաներ է ուսանդում, մի ուսուցիչ չարաթը քանի դաս ունի. ուսուցիչների ռոճիկը քանի է տարեկան, որ ուսուցիչը ինչքան ռոճիկ է ստանում, ճեմարանի ծախսը ինչքան է $^{95}/_{96}$ ուսումնական տարւայ ընթացքում։ Պ. Յովհաննիսեանը կարդաց մի ոտանաւոր. վերջը պ. Ս. Կանայեանը կարդաց իւր արած գիտողութիւնները Փ-րդ դարու պատմագիր Մեսրովբ երիցու մասին։ Երեկոյեան ճեմարանի բակում հրաւառութիւն կար։

—Մայր Տաճարի վերանորոգութիւնը փառք կըտանք Աստծուն եթէ այս տարի վերջանայ։ Մայր տաճարն իւր անշքութեան, իւր հնութեան ու պարզութեան մէջ աւելի գեղեցիկ էր, գրաւիչ էր, քան այժմ. կամարների մէջ սպիտակ արած տեղերում երեւում են հին նկարներից, որոնք չեն սպիտակեցրած։

—

Երեւանի Ջեմի առաջնորդ Գեր. Ներսէս եպիսկոպոսը, ինչպէս հաղորդում են մեզ, իւր թեմի գործերի համար մեկնել է սուրբ Էջմիածին։

—

Կախեթի երկաթուղին։ Թիֆլիսի ազնուականների արտակարգ ժողովը հոկտ. 3-ի նիստում վճռեց բարձրագոյն անուան խնդրագրով դիմել կառավարութեանը, որ նա իւր ծախսով չինի Կախէթի երկաթուղային դիծը, իսկ եթէ ոչ—խնդրել, որ այդ գործը յանձնուի ազնուականներին։

—

Բորտուութիւնը Կովկասում։ Կովկասի կայսրժկ. ընկերութիւնը ի նկատի ունենալով որ բորտուութեամբ հիւանդացողների թիւը Կովկասում սկսել է աճել, իւր վերջին նիստում վճռեց մի յանձնաժողով կազմել, որ պէտք է ուսումնասիրէ այդ հիւանդութեան վերաբերեալ բոլոր պարագաները և միջոցներ գտնի առաջն առնելու։

—

Ժողովրդական ծրի ընթերցանութիւնները Թիֆլիսում տեղի են ունենալու կիրակի հոկտ. 5-ին ա) Նախկին Աւճալեան ճաշարանում, բ) երկաթուղային արհեստանոցներում գ) Վերայի պիշերային ապաստանարանում։

—

Քաղաքային երկաթուղու կայարաններ բացուելու են, «Նով. Օբ.»-ի տեղով՝ Բաթումում, Բագւում և Քութայիսում։

—

Կայերի անվճար ճանապարհորդութիւնը երկաթուղիներով։ — Երկաթուղիների գլխաւոր վարչութիւնը՝ բարեգործական ընկերութիւնների միջնորդութեան համաձայն, ինչպէս լսել է «Նովոստի» լրագիրը, հարց է տարել կայերին և աշքացաւ ունեցողներին, ինչպէս և նրանց ուղեկցող անձերին իրաւունք տալ ձրի ճանապարհորդելու երկաթուղիներով։

—

Նոր բուժավայր (կուրորտ)։ «Հերն. Վեստ.»-ի տեղով, Բաթումի մօտ գըտնուած Աւախինճաուրի գիւղում բուժավայր է բացուելու։ Մի հարուստ վաճառական մտադիր է շինել այդտեղ տաք լոգարաններ և հիւրանոց։ Ծովի ափից և լոգարաններից ձիաքարշ երկաթուղու հաղորդակցութիւն է բացուելու։

ՄԱՄՈՒԼԻ ՇՈՒՐՋԸ

Պրագայում լոյս տեսնող «Նարոդնիէ Լիստի» լրագիրը, քննադատելով Ռուսիայի պատմական կոչումը, նկատում է, որ՝

Բարի մարդը պէտք է ուժեղ լինի։ Բարութիւնն ու ոյժը այն յատկութիւններն են, որոնք միշտ բնորոշել են ռուսներին և որոնք մանաւանդ երեւացել են նրանց մէջ ներկայումս։ Մի ուրիշ ազգ, որ իւր մէջ ոյժերի աճումն է զգում, փքւում և անզգայ է դառնում։ Ալեւանացին, ընդհակառակը, որքան ուժեղ է, այնքան աւելի զիջող է լինում դէպի բոլոր թոյլերը, այնքան աւելի նա գիտակից է լինում, որ ուժեղի պարտքն է պահպանել թոյլին։

Ռուսների և Ռուսիայի այս յատկութիւնից ծագում է այն, որ բոլոր դժբաղդ ազգերը, որոնցից աւելի ուժեղները խլում են նրանց իրաւունքները, կարող են իրենց հայեացքը դարձնել դէպի Ռուսիան և իւր Միահեծանը կատարեալ հաւատով։ Ռուսիան այնքան մեծ է և զօրաւոր, որ կարող է բաւականանալ միայն ինքն իրենով։ Նա ոչնջից վախենալիք չունի և կարիք էլ չունի ունենալ ողորմութիւնը հայցելու։ Նա ոչնջից օգնութիւն ստանալու պէտք չունի, բայց ամենքը կարօտ են նրա օգնութեան։ Նա դաշնակիցներ չի որոնում. ուրիշներն են, որ ուզում են նրա բարեհաճութիւնը վայելել, որպէսզի դաշնակցեն նրա հետ։

Գրագայի լրագիրն իւր յօդուածը վերջացնում է յոյս յայտնելով, որ Ռուսիան չի կարող մոռանալ իւր պատմական կոչումը։

*** Դուք մի ասէք, ս. Էջմիածնում անցեալ սեպտեմբերի 14-ին կատարուել է ս. միւռոնօրհնութեան հանդէսը, իսկ մենք ամենևին տեղեկութիւն չենք ունեցել և այդ մասին իմանում ենք միայն այժմ և այն էլ «Իժնի Կրայ» կոչուած ռուս թերթից։ Ահա թէ ինչ է գրում այդ թերթը, հայոց եկեղեցու և միւռոնօրհնութեան հանդէսի մասին վայր ի վերոյ տեղեկութիւններ տալուց յետոյ։

Այս տարւայ (ներկայ դարում վերջին) (?) միւռոնօրհնութեան հանդէսին ներկայ լինելու համար ս. Էջմիածին էին հաւաքուել աշխարհական և հոգևոր պատուաւոր անձերից բաղկացած պատգամաւորութիւններ ռուսական բոլոր 6 հայադաւան թեմերի, նմանապէս և Թիւրքիայի, Պարսկաստանի, Հնդկաստանի և Արեմտեան Եւրոպայի հայերի կողմից, որոնց համար Էջմիածնի պատրիարքական (կաթողիկոսական) գահը մի համազգական շաղկապ է հանդիսանում։

Մենք «Իժնի Կրայ» լրագիրը շատ է սիրում սուտ փաստեր և սուտ զգայմունքներ յայտնել. դա նրա արհեստն է։

ԳԵՂԵՑԻԿՈՒԹԻՒՆ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Հայոց ներկայացումներ։ Հայ դերասանների մի խումբ այժմ գտնւում է Բաթումում, ուր այսօր, հոկտ. 5-ին, տալու է իւր առաջին ներկայացումը. ներկայացնելու են «Ասլան Բալասի» պիէսը։ Երկու ներկայացումից յետոյ խումբը չարունակելու է իւր ճանապարհը։ Խմբի մէջ են տ.տ. Աւետեան, Փառանձէմ, պ.պ. Աբէլեան, Վրոյը, Սահակեանց, Աւետեան, Ալիխանեան և այլք։

—

Ռուսաց ներկայացումները Թիֆլիսում չարունակւում են, բայց մինչև օրս չեն կարողանում գրաւել հասարակութեան ուշադրութիւնը։ Հինգշաբթի «Порывъ» պիէսի փոխարէն ներկայացրին «Սէր և Նախապաշարմունք» պիէսը։ Չնայած իւր գեղեցիկ գաղափարին, պիէսը շատ թոյլ է, և այնպիսի անբնականութիւններով լի, որ վաղուց արժանի է բեմից վերացուելու։

Այս օրերս ռուսաց խումբը ներկայացնելու է Ռոստանի «Ճնոդք Իշխանուհի»-ն, որ մեծ տպաւորութիւն է թողել անցեալ տարի Պետերբուրգում։

—

Նիիիտա։ Թիֆլիսի հասարակութիւնն էլի առիթ պիտի ունենայ իւր ծանօթ երգչուհի Նիկիտային լսելու, որ մօտ օրերս գալու է Թիֆլիս միքանի նուագահանդէսներ տալու համար։

—

Թատրոնական-երաժշտական ցուցահանդէս. Ներկայումս Պարիզում, Palais de l'Industrie»-ի չէնքում բացուած է թատրոնական-երաժշտական մի հետաքրքրական ցուցահանդէս։ Թատերասէրների և երաժշտահիւների համար այստեղ ուսումնասիրելու բաւականի նիւթ կայ։ Առանձին ուշադրութեան արժանի են ի ցոյց դրուած երաժշտական գործիքները՝ ամենահին ժամանակից մինչև մեր օրերը։ Այստեղ կարելի է տեսնել և յոյն-հռովմէական բեմը և միջնադարեան փողոցը իւր երգիչներով ու ծաղրածուներով։ Կան բազմաթիւ պատկերներ, լուսանկարներ, ձեռագրներ և այլն, որոնք այսպէս թէ այնպէս կապ ունեն գեղարուեստի վերոյիշեալ ճիւղերի հետ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԹՐՔԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

—

Սուլթանի բողոքը։ Լոնդոնից մեզ գրում են, որ սուլթանը բողոքել է անգլիական կառավարութեան Գլադստոնի դէմ, նրան մարգասպան անուանելու համար, բայց կառավարութիւնը ոչինչ չի արել։

—

Սուլթանի գոհունակութիւնը։ Սուլթանը ընդունելով կաթոլիկ հայերի պատրիարք ս. Ազարեանին գոհունակութիւն է յայտնել կաթոլիկ հայերի բռնած դիրքով, որոնք միշտ խաղաղասէր են եղել հակառակ հայադաւան հայերի։ Այսուհետև կաթոլիկ հայերը իրենց պիտի անուանեն «կաթոլիկ-օսմանեաններ» և ոչ թէ հայ-կաթոլիկ։

—

Նամակ Վանից։ Ռուսաց «Պրաւիտ. Վեստ.» պաշտօնական լրագրի մէջ կարդում ենք հետեւեալը.

«Times» լրագրի մէջ այս օրերս մի թղթակցութիւն է լոյս տեսել Վանից, սեպտ. 8-ից, որի հեղինակը հետեւեալ տեղեկութիւններն է հաղորդում. «Վանի վիլայէթում,—ի միջի այլոց գրում է թղթակիցը,—ամենագլխաւոր դժուարութիւնը, որ մինչև այժմ արգելք է

եղել հայկական խնդրի խաղաղ ընթացքին, չքացել է այն օրից, երբ յեղափոխական շարժման պարագլուխները մասամբ փախան և մասամբ սպանուեցան։ Եթէ քիւրդերը չլինէին, բոլոր բարդութիւնների ու խառնակութիւնների առաջը կարելի էր առնել տեղական հիւպատոսների հասարակ միջամտութեամբ։ Տասնհինգ տարի առաջ, նախ քան յեղափոխական շարժման սկզբնաւորուիլը, իրենք հայերը խոստովանում էին, որ իրենց և Թուրքերի միջև միշտ կարող են ամենալաւ յարաբերութիւնները լինել։ Միակ այն փաստն արդէն, որ վերջին անկարգութիւնների ժամանակ շատ հայեր իրենց փրկութեան համար պարտաւոր էին Թուրքերին, որոնք թագցրել էին նրանց իրենց տների մէջ, բաւական ապացուցանում է, որ հայկական ագիտացիան, զրանից առաջացած խռովութիւնները ու վայրագութիւնները Թուրքերի միջից արմատախիլ չեն արել նրանց սրտերում տրամադրութիւնը դէպի քրիստոնեաները. բայց հայերն էլ մի բան պիտի անեն Թուրքերի հետ համաձայնութեան գալու համար։ Նախ, նրանք պէտք է հրաժարուեն յեղափոխական ձգտումներից, որոնք այնքան աղէտներ բերին իրենց հայրենակիցների գլխին, և յետոյ անհրաժեշտ է, որ նրանք դէն ձգեն եւրոպական պետութիւնների դինեալ միջամտութեամբ ստեղծած հայկական արտօնութեան մասին ունեցած ցնորքը»։

«Պէտք է նկատել,—ի վերջոյ գրում է «Times»-ի թղթակիցը,—որ նոյն իսկ հայերի ընաւորութիւնը խոչընդոտ է լինում իրենց նպատակների իրագործման։ Հայերն ընդունակ չեն սերտ միաբանութեամբ գործելու։ Նախանձի և նոյն իսկ դէպի իրենց մարդիկն ունեցած անվստահութիւնն առանձին անձերի արգելք է լինում անհրաժեշտ ազդեցութիւնը ձեռք բերել նրա համար, որպէսզի իրենց հայրենակիցների գործողութիւններին ու ծրագրներին աւելի միութիւն տան։ Վերջապէս, պէտք է ասած և այն, որ հայ ագիտատորների մեծ մասի մէջ հաստատուել ձգտումն աւելի զօրաւոր, է քան որևէ քաղաքական չարժառիթ»։

—

Բանուորների ցոյց։ Կ. Պոլսից հեռագրում են. «Մեպտ. 28-ին ծովային զինանոցի մի քանի հարիւր բանուորներ, որոնք մի քանի շաբաթ էր, որ ռոճիկ չէին ստացել, ցոյց արին Ծովակալութեան շինութեան առաջև մատդրում էին դնալու դէպի Եղբղ-Քէօշկ, բայց նրանց, թէև դժուարութեամբ, դիմադրեցին մասնակի կերպով գոհացում տալով նրանց պահանջներին։

—

Արեւելեան դժուարութիւնների լուծումն։ «Standard»-ն ասում է, որ եթէ Ռուսիայի և Անգլիայի միջև համաձայնութիւն կայանայ, այնժամանակ կըվերականգնի եւրոպական համերաշխութիւնը և դրա հետ միասին հնարաւոր կըլինի դադարեցնել խռովութիւնները Արևելքում։ Միւս կողմից կիսապաշտօնական «Polit. Corresp.» Թերթի Պարիզի թղթակիցը հաղորդում է, որ կրետական խնդրում պետութիւնների միաձայնութեամբ ունեցած աջողութիւնը Պարիզի կաբինետին ստիպել է յայտնել այն կարծիքին, որ պետութիւնների նման եռանդուն վարմունքը միայն կարող է աջողեցնել լուծելու և միւս դժուարութիւններն Արևելքում։ Ուստի Կ. Պոլսի ֆրանսիական դեսպան Կամբոնին հրամայուած էր ամենավճռական կերպով խօսել սուլթանի հետ և համոզել նրան, որ իւր խոստումները կատարելու դէպքում միայն կարող է դէմ առժամանակ վերականգնել խաղաղութիւնն իւր կայսրութեան մէջ։ Անկասկած է, որ Թուռն այդ բանում ստիպուած կըլինի մի քանի դժուարութիւնների դէմ կռուել, բայց նա կարող է յոյս ունենալ, որ պետութիւնները կօգնեն իրեն իւր ֆինանսական դրութիւնը փոքր ինչ կարգի դնելու։

—

Հասարակական կարծիքի արտայայտութիւնն Անգլիայում։ «Neue Freie Presse»-ին հաղորդում են, որ Անգլիայում հասարակաց կարծիքն արտայայտում է իւրաքանչիւր քայլափոխում և երբեմն շատ ինքնուրոյն կերպով։ Օրինակի համար Անգլիայի և Իռլանդիայի աղանդաւորները դիմել էին մարքիզ Սոլսբըրիին մի հաւաքական խնդրագրով, որ 1878-ի Կիպրոսի զաշնադրութիւնը ոչնչացուի, որովհետև այդ ճանապարհով Անգլիան կարող է պետութիւնների հաւատը գըրաւել, որը ամենից աւելի կարևոր է Անգլիայի համար։ Ակրինգտոն քաղաքի բուրգոմիստրը Բայլմորալ էր ուղարկել իւր քաղաքացիների կողմից մի ուղերձ, որոնք յարգանօք խնդրում էին, որ Վիկտորիա Թագուհին հարկադրէ իւր կառավարութեանը չչեղուելու ցամաքային պետութիւնների ծրագրից Թիւրքիայի վրայ ճնշում գործելու վերաբերմամբ։ Թագուհու անձնական քարտուղար Արտուր Բիգը Ակրինգտոնի բուրգոմիստրին պատասխանեց թէ ինքը չկարողացաւ ուղերձը ներկայացնել Թուգուհու բարեհայեցողութեանը, այլ ուղարկեց մարքիզ Սոլսբըրիին։ Վերջապէս Սիտիի ամենազդեցիկ ընկերութիւններից մէկը մի որոշում էր կայացրել, որով յայտարարում էր, թէ Թիւրքիայի վերաբերմամբ ձեռք առնելիք միջոցներն աջակցութիւն կըստանան Սիտիի բանկիրների կողմից։

—

Պատժի ենթարկուած Թուրքեր եւ հայեր։ Կ. Պոլսից «Agense Havas»-ին հեռագրում են, որ արդարադատութեան մինիստրութեան մէջ նիստեր ունեցող արտակարգ դատարանը 15-ական տարի ժամանակով աքսորի է դատապարտել առաջին մահմեդականներին, որոնք մեղադրւում էին վերջին անկարգութիւնների ժամանակ հայերին կոտորելու համար։

Միւս կողմից, մահուան պատժի են ենթարկուած մի քանի հայեր, դրանց Թուում և մի հայ, որին Թուրք կառավարութեան ձեռքն էր յանձնել Բելգիայի կառավարութիւնը այն պայմանով, որ նա հարցուփորձից յետոյ ազատ Թողուի։ Այժմ բելգիական կառավարութիւնը եռանդուն կերպով պահանջում է նրա ազատումը։

—

Հայ փախստականները Ցունաստանում։ Ցունաց կիսապաշտօնական «Proia» լրագիրը խստութեամբ յիշեցնում է հայ փախստականներին, որ նրանք պէտք է ամեն կերպ հեռու մնան ագիտացիա անելուց, որը կարող է հարևան պետութիւնների դէմ Ցունաստանն ունեցած յարաբերութիւնները վատացնել։

—

Ջարժում մահմեդականների մէջ։ Կ. Պոլսից հաղորդում են, որ մահմեդական բնակիչների մէջ նորից չարժում է նկատւում, որ մեծ անհանգստութիւն է պատճառում Դրանը։ Ստամբուլի գլխաւոր մզկիթներից մէկի մէջ Թուրքերին ապստամբական կոչող յայտարարութիւններ էին ցրուած. Սկուտարիում մի կարմիր դրօշակ էր պտնուած Թուրքերէն ապստամբական մակագրութեամբ։ Վերջապէս փողոցներում երիտասարդ Թուրքերի մի կոչն է երևացել, որով մահմեդականները հրաւիրւում են դահընկեց անելու սուլթանին։ Կառավարութիւնը խիստ միջոցներ է ձեռք առնում։

—

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Ինչպէս Լոնդոնից «Նովոստի» լրագրին հեռագրում են, լորդ Ռոզբերին կամենում է, որ իրեն յաջորդ ընտրուի լորդ Ասկվայզը։

—«Daily News»-ը գովաբանում է Ռոզբերու ճառը և պնդում է, որ կրկին անգամ նա ընտրուի ազատամիտ կուսակցութեան պարագլուխ։

—«Daily Chronicle»-ը գայրանում է Ռոզբերու դէմ և ասում է, որ նա արժանացել է սուլթանի չնորհակալութեան։

—Առաջիկայ տարուայ մայիսին Վիկտէլմ կայսրը կայցելէ Բուքարեստ։

Լոնդոնից հեռագրում են որ Քենտրբրիի արքեպիսկոպոսը սեպտ. 29-ի (հոկտ. 11-ի) առաւօտեան ժամասացութեան ժամանակ կաթուածահար է եղել հիվանդացում։ Նրան խնդրն տարել են եպիսկոպոսական տունը, ուր և խնդրն վախճանուել է։

—Հռոմից հեռագրում են, որ սեպտ. 29-ին (հոկտ. 11-ին) Նէապոլիտական պրինցի և Հերնապորիայի իշխանադուստեր ամուսնութեան դաշինքն օտորագրել են իտալական և Հերնապորիայի արտաքին գործերի և արդարադատութեան մինիստրները, Իտալիայի թագաւորի և Հերնապորիայի իշխանի հատուկ մատենները։

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

ՄԱՆՇԵՍՏՐ, պ. Մէրամին. - Մէկ շաբաթ է, որ Հեղնից ստացել ենք Գլադստոնի Լիւբլպլում խօսած ճառի ամբողջական թարգմանութիւնը։ Տպագրութեան մէ սպասէք։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

ՏԱՍԸ ՊԱՏՈՒԻՐԱՆՆԵՐ ՆՈՐԱՊԱՏԱԿ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ

Մի ամերիկուհի չարադրել և ամերիկական լրագրերի մէջ հրատարակել է ամուսնացած նորատի կանանց համար հետեւեալ տասը պատուիրանները։

1) Խոյս տուր առաջին անգամ ամուսնուդ հետ կռուելուց։ Բայց երբ մի անգամ կռիւն սկսուեց, էլ մի փախչիր նրանից և այնպէս արա, որ ամուսինդ յաղթուի և լաւ էլ զգայ իւր պարտութիւնը։

2) Մի մոռանար, որ դու ամուսնացել ես մարդու հետ և ոչ Թէ հրեշտակի հետ։ Ուստի մի զարմանար, եթէ նա անկատար է և պակասութիւններ ունի։

3) Զահլա մի տանիր նրանից փող խնդրելով։ Աշխատիր շատ չպահանջել այն գումարից, որքան նա նշանակել է քեզ համար։

4) Անկարելի է, որ ամուսինդ ամենևին սիրտ չունենայ. բայց, յամենայն դէպս, նա աւելի կամ պակաս լաւ ստամոքս ունի, և դու լաւ կանես, եթէ դաշնակից գտնես ամուսնուդ ստամոքսի մէջ, խոհանոցի վրայ հոգալով։

5) Ժամանակ առ ժամանակ ամուսնուդ Թող վերջին խօսքը, բայց ոչ շատ յաճախ։ Դա գոհութիւն կըպատճառէ նրան և քեզ էլ ամենևին չի վնասիլ։

6) Լրագրերի մէջ միայն մեռելներին վերաբերեալ յայտարարութիւնները մի կարդալ, որպէսզի երբեմն կարողանաս ամուսնուդ հետ այնպիսի նիւթերի մասին խօսել, որոնք հետաքրքրում են նրան։

7) Միշտ քաղաքավարի եղիր նրա հետ։ Յիշիր, որ երբ նա քո փեսացուն էր, դու նրա վրայ նայում էիր ինչպէս մի բարձրագոյն էակի վրայ, և այժմ մի արհամարհիր նրան։

8) Թոյլ տուր, որ երբեմն նա կարծէ Թէ ինքը քեզանից աւելի կրթուած է։ Այդ բանը նրան կըշոյէ։

9) Եղիր նրա համար ընկերուհի, եթէ նա խելօք մարդ է, և աշխատիր բարձրացնել նրան մինչև քո աստիճանը, եթէ յիմար է նա։

10) Ցարգիր նրա ծնողներին, մանաւանդ նրա մօրը, որը քիչանից առաջ է սիրել նրան։

Այս բոլոր պատուիրանները իրագործելի են, բացի վերջինից, որը, կարծում ենք, հարսները մի քիչ կըդժուարանան պահպանել...

Պատասխանատու խմբագրի՝
ՄԻՆԱՍ ԲԵՐԲԵՐԵԱՆ

Հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Խմբագրութիւնս յիշեցնում է իրենց պարտքը նրանց՝ որոնց մօտ խմբագրութեան հատանելի գումարներ կան եւ որոնց վրայ ապառիկներ են մնում։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հոյս տալս
ԻՄԻՆ ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻՆ
ԴԱՄԱՍԿԵԱՆ ՍՈՒՐ
2 արարսւածով դրաման։
ԳԻՆՆ Է 50 ԿՈՊ.
Վաճառւում է Թիֆլիսում Կինդրոնական և Կովկասեան գրավաճառանոցներում, իսկ Երևանում հիւանդակի մօտ։ 5 -1

Съ разрѣшенія начальства
ЗА 5 РУБЛЕЙ
въ мѣсяцъ бывш. студентъ, со званіемъ учителя и аттестатомъ зрѣлости, приготовляетъ въ 1 й классъ и въ остальные и на полное содержаніе—по соглашенію. Видѣть только отъ 4-хъ до 6 час. въ будни. Адресъ постоянный: Михайловская улица, домъ Алерціани, № 47, по серединѣ двора, бѣлый балконъ, направо
(671) 10—9

Շաբաթ հոկտեմբերի 5-ին լինելու է մեծ ԴԱՀԼԱՃ ներկայացում ի ՆՊԱՍՏ ամեն տեսի հասարակական սիրելի օր. ՕՅԼԴԱ ՍՈՒՐՒ որն այդ երեկոյեան առանձնապէս կըզեերազանցի։ Դուրս կըգան Գ. Ռ. Սուրը և ուրիշները։ Վերջումը ՔԱԼ-ՄՈՌԵԼ կոմիկական պանտոմիմ։ Պարիզեան պարը կըպարեն օր. Օլգա և Գ. Ռ. Սուրը։
Ա Զ Գ։ Վաղը 2 ներկայացում է լինելու։
(700) 1—1

ԱՒԵՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԹԻՖԼԻՍ, ՆԱԳՈՐՆԱՅԻ ՓՈՂՈՑ, № 9

Ցանկացողը ունենալ իրենց առևտրական գործերի համար անգլեալ յունիս ամսում ուսման ընթացքն ստարտած աշակերտներ և աշակերտուհիներ, թող բարեհաճեն դիմել կուրսերի հիմնողին, Ս. Մանուէլեանցին։ Ստարտողները ստացել են մասնագիտական առևտրական կրթութիւն, Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուից հաստատուած ծրագրի համեմատ, ունեն օրինաւոր պաշտօնաթղթեր։

Ընդունելութիւնները սկսուել են սեպտեմբերի 2-ից։ Կուրսերի ծրագիրն և կանոնները կարելի է ստանալ չէխովեր հոդ. Ծովհաննէսների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում։ Ստար քաղաքացիք դիմում են՝ Тифлисъ, учредителю Коммерческихъ Курсовъ С. П. Мануэльянцу.
(668) 12 - 12.

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՑՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ գրասենեակում և գրավաճառանոցներում վաճառւում են ընկերութեան հետեւեալ հրատարակութիւնները։

82	Ձիլիոնի կալանաւորը, Մ. Հարտմանի, Ի. Կ. Դիւնդարեան	— 60
83	Համլէտ Ձէքսպիրի, թ. անգ. Յով. խան Մասէհեանի	— 75կ
84—87	Քննական պատմ. Հայոց, Ա. Մ. Գարագաշեանի չորս հատ	4 —
88	Պատմ. Հայոց, բ. տպ. Ս. Պալասանեանի	1 50
89	Ակնոյ հնութիւնք, Ց. Ձանիկեանի	2 —
90	Ուրբինօեցի մանուկը, Ույդի զրոյցներից	— 10
91	Կօշկակար երաժիշտ, Տիւտչևի	— 5
92	Խնձորենիների երկրում, Ույդի զրոյցներից,	— 10
93	Երկու եղբայր, հեղ. տիկ. Մօնգոմերի թարգմ. Գ. Գ.	— 60
94	Մեծապ. Մուրաց., գ. տպ. Ց. Պարոնեանի.	— 40
95	Նախագիտելիք բուսարանութ. Ա. Քիչմիչեանի	— 80
96	Հազարից մէկը, Ն. Մամիկոնեանի.	— 60
97	Ինչպէս կուզէք, Շէքսպիրի. թ. Ց. խան Մասէհեանի	— 50
98	Դպրոցական առողջապահ. բժ. Վ. Արծրունի	— 50
99	Կեղեքիչ. վէպ Վ. Ի. Նեմիրովիչ—Դանչենկոյի	— 10
100	Դուռդ արմատնի,	— 5
102	Դուռդ Ագդէն,	— 5
103	Ձանապարհորդ գորտը,	— 3
	(Վ. Գարշինի, թարգմ. Հ. Ա-ռաքելեան.	
104	Մանկական լօտօ, պատկերներով	1 20
105	Գետնափորի երեխան. թ. Չիրվանզադէ	— 15
106	Վրէժ, Դիւի դը-Մօպասանի, թ. Լ. Մ. Ադամեանի.	— 5
107	Ակամայ մարդասպան, թարգմ. Ց. Յովհաննիսեանի	— 15
108	Մուֆլու. Ույդի, թարգմ. Ց. Օհանեանի.	— 10
109	Աներևոյթ հոգագործ.	— 7
110	Նապաստակ, Սլիվիցկու թարգմ. օր. Ն. Ղուլիջանեան	— 7
111	Ծերունի Մարիօն, Իւրմչ Եակշիչի, թարգ. Մեղնիկեանի	— 10
112	Ռոմէօ և Ջուլիէտ, Շէքսպիրի, թ. անգ. Ց. խան Մասէհեանի	— 60

(448) 16—11

Тифлисъ Дозв. цензурою 4-го Октября 1896 г. Տպարան Ա. Մելիք-Շահնազարեանցի։ Типогр А. О. Меликъ-Шахназаріанца, Воронц. Набережн. церковный домъ